









պէս զի նրանք իմանային իրանց ընկերներէն  
կարծիքները և յայնչեմն պոլիցիային  
Պատմիցաւ, թէ մի պարտնից նրա աղա-  
խինը գողացաւ մեծ քանակութեամբ զբեր-  
որոնց թուում և մի քանի արգելիված բո-  
շիւրներ և երբ այդ պարտնից գանգաւորե-  
ցաւ դատարանին, նրա գանգաւոր մերժվե-  
ցաւ այն հիման վրա, թէ գողութիւնը  
լաւ նպատակով է կատարված, այսինքն, որ  
պոլիցիային յայտնվի, թէ աղախին պարտնի-  
քն ու է գրաւվում: Այդ վերջին մեղադրան-  
քը, վերաբերվում այն բանին, որով բերվին-  
ցինք իրաւացի կերպով պարծնում են,  
այսինքն դատարանին, որ ժողովրդի բա-  
րոյականութեան բարձրագոյն արտայայտու-  
թիւնն է, չատերին գործարարի և կապած  
պատճառեց: Ամենքը սպասում էին, որ մի-  
նիստը կը հերքի գոնեա այդ լուրը, որ նա  
իրաւունք չունի թոյլ տալ հասարակու-  
թեանը կասկածել դատարանը, որ պետա-  
կան արդարութեան անկողնապատէս ներ-  
կայացուցին է, բայց մինիստրը այդ լուրն  
էլ չը հերքեց:

Նա ոչ մի խօսք չստաց այդ ծանր մե-  
ղադրանքի մասին: Նա ոչ մի խօսք չստաց  
նոյնպէս այն մեղադրանքի մասին, որ կա-  
ռավարութիւնը հալածելով սօցիալ-դեմոկ-  
րատներին, նրանց վարդապետութիւնը ուս-  
րածելու համար գործածած ապօրինի մի-  
ջոցները գործադրելը թոյլ է տալիս հա-  
կասեմիտներին, որոնց վերաբերութեամբ  
պոլիցիան գործ չէ դնում բացառական օ-  
րէնքներ: չանարարութեան համար մի և  
նոյն է, ասաց պատգամաւորներին մէկը, թէ  
ո՞վ պատճառ կը դառնայ ներքին պատե-  
րագոյն, մի դասը կը բարձրացնէ միւսի  
դէմ, թէ ո՞վ կը սկսի կողոպտել, հրեհահեր  
զցնէ՝ սօցիալիստները, թէ հակասեմիտները:  
Ուրեմն, ստանալով ժողովրդի բացառա-  
կան և անսահման իշխանութիւնը, ինչի  
հալածել մի կուսակցութեանը, միւսին հա-  
վանաւորել և այս վերջին անդամներին պե-  
տական կանցերը մինչև անգամ բարեկա-  
մական նամակներ է գրում:

Այդ հարցը պատասխան չը ստացաւ:  
Պետականը դրա մասին էլ ոչինչ չստաց,  
միայն իշխան Բիսմարկ հեռեկալ նիստին  
նկատեց, թէ հակասեմիտական շարժումը

ի հարկէ ցանկալի չէ, բայց նա  
քաղաքական մարդ է և այդ  
պատճառով պատասխանում է  
իրան գրած բոլոր նամակներին:  
Այդ մեկնութիւնը բացի հակասեմիտներից  
ոչ ոքի չը բաւականացրեց, ընդհանրապէս  
չատերին պայքարեց, որովհետեւ, եթէ հա-  
կասեմիտական շարժումը արիւնհեղութեան  
առիթ էր տուէր, դրա պատճառը բանաւոր-  
ների առողջ գաղափարներն էր: Ինչ կը  
վերաբերի իշխանի քաղաքականութեանը,  
նրա վարմունքը նորեւեմն բայեստագի-  
մէջ լաւ օրինակ է այդ քաղաքականութեան  
թեան:

Բայց վերադառնանք մինիստր Պետկա-  
մարի ճառին: Այդ ճառի մի տեղը աղբիւ-  
րութիւն գործեց գերմանական պետութիւն-  
ների ներկայացուցիչներին վրա, որոնք մի-  
ջեալ խորհուրդի աղբիւրներ են: Նկարագ-  
րելով այն վտանգները, որոնցով սպառնում է  
հասարակութեանը սօցիալ-դեմոկրատիայի  
զարգացումը, մինիստրը ասաց, որ այդ կու-  
սակցութեան բունը լայնացել մէջ է և  
կառավարութիւնը երեւի ստիպված կը լի-  
նի պաշարված դրութիւնը այդ քաղաքի  
վրա էլ տարածել: Այդ խօսքերը ոչ ոքի  
վրա չէին ազդել և նրանք անուշադիր կան-  
ջնէին, եթէ միացեալ խորհուրդի անդամ-  
ներին մէկ շարժումներ չը լինէին: Այդ  
անդամը բարձրացաւ, հեռացաւ բազմաթի-  
ւի մէջքից և նրա դէմքը այնպիսի զար-  
մանք և վրդովմունք արտայայտեց, որ ա-  
մենք նրա վրա ուշադրութիւն դարձրին:  
Կա Սակսոնիայի ներկայացուցիչն էր և այ-  
ժմ միայն խմացաւ, թէ ինչպիսի նորու-  
թիւն է պատրաստվում իր հայրենիքի հա-  
մար կայսերական կառավարութիւնը հոգս  
չէր տարել յայնչեմ սակսոնական կառավա-  
րութեանը, որ այդ պետութեան գլխաւոր  
քաղաքներից մէկի մէջ պէտք է պաշարված  
դրութիւնը մոցնէ: Նրեականացե՛ք մի ան-  
կախ կառավարութեան դրութիւնը, երբ նա  
նահանգական կառավարիչ է համարվում,  
որին հրամայում են գործադրել այս կամ  
այն միջոցը, բայց նրա կարծիքը չեն հարց-  
նում: Գրեգորի մէջ այդ բանը չը հաւա-  
նեցին, որովհետեւ սակսոնական կառավա-  
րութեան պաշտօնական լրագիրը դաւ-

մանք է յայտնում մինիստրի խօսքերի  
մասին և չէ հաւատում, որ կարելի լինի  
այդպիսի միջոց նախագծել առանց սակ-  
սոնական կառավարութեան գիտութեան:  
Բայց որովհետեւ Պետկամարի ասածները  
պաշտօնապէս չը հերքվեցան, ուրեմն յի-  
շեալ լրագիրը որքան կամենում է կարող է  
զարմանալ, բայց իրաւունք չունի չը հա-  
ւատալ: Ինչ կը վերաբերի բերլինցիներին,  
նրանք մինչև անգամ չեն էլ զարմանում:  
Իսկապէս, իմ կարծիքով, Գրեգորի մէջ էլ  
երեւի չատ քիչերին զարմացրեց գերմանա-  
կան փոքր պետութիւնների անկախ ու-  
թիւնն այդ նոր ապացոյցը: Վիճարանու-  
թիւնները վերջացան և բայեստագը վճռեց  
երկարացնել պաշարված դրութեան ժամա-  
նակամիջոցը:

### «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ, 17 ապրիլի: Երէկ վե-  
րադարձու է կոմ Եւսէպով: Լուր կայ, որ  
մինիստր Իգնատիւվ նոր պաշտօն է ստա-  
նում: Պետական պոլիցիայի բաժնի գերեկ-  
տօր նշանակվում է պրօկուրօր Պելկէ: Ժո-  
ղովրդական ուսումնարանների թիւը կը  
չառացնվի: Նիվա 22 վերստ տարածու-  
թեան վրա ստաւոցից ազատվեցաւ: Բալ-  
տիան նաւահանգիստը մաքրվեցաւ ստաւո-  
ցից: Մի քանի պետութիւնների մէջ հա-  
մաձայնութիւն է կայացրած մայիսին մի  
կոնֆերանցիս կազմելու համար, որ կը  
քննի քաղաքական ապստամբ իրաւունքը  
սահմանափակելու հարցը: Թիւրքերը զրա-  
ւեցին Պրիզերը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ, 18 ապրիլի: „Правит.  
Вѣст.“ լրագիրը մէջ տպւած է բեկիւրիտ  
Վալուեկի անունով այն առիթով, որ լրա-  
ցաւ նրա պետական ծառայութեան յիսու-  
նամեակը: Թագաւորը ողջունում է Վալու-  
եկի գործունէութիւնը: Թագաւորը շնոր-  
հակալութիւն է յայտնում պրօկուրօր Պի-  
վէին: Վալուեկիակալի եպիսկոպոս սրբազան  
Յովսէփին և Վրաստանի յաջորդին Բարձրա-  
գոյն գրութեան հետ շնորհած են առաջին  
կարգի Անայի շքանշանները: Երէկ Բարձ-  
րագոյն և բարձրաստիճան անձանց և բազ-

մաթիւ հասարակութեան ներկայութեամբ  
միտրօպօլիտ Իսիդօր օծեց մատուռը մար-  
տի 1-ի եղեռնագործութեան տեղը: „Тол-  
коч.“ լրագիրը հաղորդում է, որ ներքին  
գործերի մինիստրութիւնը միջնորդում է  
150,000 ռուբլու արտաքոյ կարգի կրեդիտ  
բանալ գիշտիքի գէմ միջոցներ գործադրե-  
լու: Համար: Պարսկական գեոպոսութիւնը  
երէկ հասաւ Մոսկվա և ապրիլի 21-ին Գառ-  
չիւնի մէջ կը ներկայանայ Թագաւորին:  
Գեոպոսը բերել է շոհի ձեռագիր նամակը  
և բերլինցիներով զարդարած սուր Թագա-  
ւորի համար, իսկ Թագաւորը համար փի-  
րիւզեայ մատանի, որ իր ղեղեցկութեամբ  
միակ է ամբողջ Պարսկաստանի մէջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ, 19 ապրիլի: Պաշտօնա-  
պէս հաղորդված է. Ելիզավետպոլսկոյ քա-  
ղաքի մէջ քրիստոնեաների և հրէաների  
մէջ կռիւ պատահեց, որի ժամանակ հրէ-  
աները ծեծվեցան և նրանց մի քանի ան-  
րը և խմիչքների խանութները կողոպտվե-  
ցան: Ապրիլի 17-ին առաւօտը անկարգու-  
թիւնները վերջացրած են և հանգստու-  
թիւնը վերականգնվում է: Կռիւ ժամանակ  
մի հրէայ սպանված է և մի քանիսը ծանր  
կերպով ջարդված են: Օվիսօպօլի և Գալտ  
աւանի մէջ ապրիլի 17-ին նոյնպէս կռիւ է  
պատահել հրէաների և քրիստոնեաների  
մէջ: „Новое Время“ լրագիրը հաղորդում  
է, որ Չմերային Պալատի մօտ գտնված է  
մի ահադին ստորերկրայն անցք:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ, 19 ապրիլի: Պետական  
բանկի 5% տոմսերը առաջին շրջանի ար-  
ժէ 97 ռ. 25 կ., երկրորդ 94 ռ. 25 կ.,  
երրորդ 94 ռ. 75 կ., չորրորդ 94 ռ. 37  
կ., ներքին 5% տոմսերը փոխառութեան  
տոմսերը արժէ 224 ռ. 25 կ., երկրորդ  
217 ռ. 25 կ., արեւելեան առաջին փոխա-  
ռութեան տոմսերը արժէ 92 ռ. 87 կ.,  
երկրորդ 92 ռ. 62 կ., երրորդ 92 ռ. 87 կ.,  
ոսկի 8 ռ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդօնի վրա  
արժէ 24,62 պէնս, Ամստերդամի վրա  
124,62 պէնս, Ռուսաց 100 ռ. Համբուրգի  
վրա արժէ 210 մարկ: Բօրսայի արամա-  
դրութիւնը հանգարտ է:

### Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

Մէլիք-Աւան-խանը մեր պատմութեան մէջ  
յայտնի է անունով Գովհաննէս իշխան: Նրան  
երբեմն կոչում են գուգարացոց, երբեմն ու-  
տէացոց, իսկ երբեմն Մեծ Սլանայի իշխան: Նա  
հայոց ճին իշխանական տոհմից էր, կենում էր  
իր անմատչելի ամրոցում, որ շինված էր Թաւ-  
թար գետի մօտ և կոչվում էր Մեծ Սլանայ \*):  
Գովհաննէս իշխանը չափազանց խիստ, կա-  
մալուր և հպարտ մի անձնաւորութիւն էր, իր  
թշնամիներին սարսափի մէջ պահելով—գլխաւոր  
պայմանն էր նրա զօրութեան: Լինելով գլուխ  
ճինգ դաշնակցական մէլիքութիւնների, նա  
միացրել էր Փոքր Սլանայի ու Արցախը և այս-  
պիսով կազմել էր մի անազնի ուժ: Նրա ռուս-  
ները տիրեցին Գերբէնդը և Բագու, նա սկսեց  
իր դաշնակցից Մէլիք-Նիկանի ձեռքով բանակ-  
ցութիւններ անել Պետրոս մեծի հետ, առա-  
ջարկելով կայսրին իր ծառայութիւնը և խնդ-  
րելով նրա հովանաւորութիւնը պարսից լծից  
ազատվելու համար:

Եւ այսպէս Փոքր Սլանայի և Արցախի նահանգ-  
ներում շարժումը սկսվել էր, որովհետեւ այստեղ  
միութեան կար, մէլիքների դաշնակցութիւն կար:  
Իսկ Մեծ Սլանայի նահանգում, որտեղ Գաւթի  
բեկը կամենում էր սկսել իր գործողութիւնն-  
երը, դեռ ամեն ինչ անչարժ էր, որովհետեւ  
նրա ճին

այստեղ միլիթները ոչինչ կապ չունէին միմեանց  
մէջ:

Զաւալին այն էր, որ Փոքր Սլանայի և Ար-  
ցախը թէ քաղաքական և թէ եկեղեցական կա-  
ռավարութեան կողմից բոլորովին բաժանված  
էին Մեծ Սլանայից: Քաղաքական կողմից բա-  
ժանված էին նրանով, որ մեր յիշած ճինգ դաշ-  
նակցական միլիթները իրանց առանձին  
խնդրաւորութիւնն ունէին և կապված էին Մեծ  
Սլանայի հետ: Իսկ եկեղեցական կառավարու-  
թեան կողմից նոյնպէս բաժանված էին, որով-  
հետեւ սկսեալ ամենաձին գարեից Աղուանի-  
կաթողիկոսները, միտրօպօլիտները, եպիսկոպոս-  
ները առանձին հոգեւոր իշխանութիւնն ունէին  
Եւմիլամից անկախ: Գանձասարի վանքը որպէս  
առաջ, նոյնպէս և Գաւթի բեկի օրերում Աղուա-  
նից հոգեւոր իշխանութեան ամենաանխառն էր:  
Նրա ներկայացուցիչները, որպէս էին, սկզբում  
Եսայի եպիսկոպոսը, իսկ յետոյ Ներսէս եպիս-  
կոպոսը ձեռք ձեռքի տուած, միասին էին գոր-  
ծում Գովհաննէս իշխանի հետ: Թէ ռուսների  
հետ ունեցած բանակցութիւնների մէջ և թէ ի-  
րանց ներքին զինուորական պատրաստութիւն-  
ների մէջ այդ երկրի հոգեւոր և մարմնաւոր իշ-  
խանութիւնները ներկայացուցիչները համբաւի  
էին:

—Պէտք է աշխատել գոնէ միանալ Գովհա-  
նէս իշխանի հետ, ասաց Ստեփաննոսը, երբ նը-  
կատեց, որ բեկը շարունակում է յամառութեամբ  
պնդել կը կամըր:—Ես կարող եմ այդ միու-  
թիւնը կայացնել, իմ յարաբերութիւնները իշ-  
խանի հետ չատ լաւ են:

—Ես միութեան հակառակ չեմ, Ստեփան,

պատմականաց բեկը—Բայց դու գիտես, Գով-  
հաննէս իշխանը որ աստիճան հպարտ մարդ է.  
նա, շատ հատկապէս է, որ ինձ չի ենթարկվի,  
իսկ ես նրա զօրապետը լինել չեմ ցանկանալ:  
—Պէտք է աշխատել գոնէ Գանձասարի միա-  
րայօրեաներին միացնել Եւմիլամի հետ, ասաց  
Իշխանը:

—Թէ և մի առանձին օգուտ չունի, բայց այդ  
մասին ինքը էլ չմիտնի: Աստուածատուր կա-  
թողիկոսը աշխատում է, պատասխանեց բե-  
կը:

Գետոյ նա սկսեց պատմել, թէ ինչպէս ինքը  
դուրս եկաւ Վրաստանից Եւմիլամի ուղևորու-  
թիւնով, դնաց այնտեղ գլխաւորապէս կա-  
թողիկոսի հետ՝ տեսնելու նպատակով: Այդ  
մարդը (չարժման) եռանդուր և ամենաշնոր-  
հգործներից մէկն է, ասաց նա, աւելացնելով,  
թէ հայերը միշտ հրաշքներ են գործել, երբ  
հոգեւոր գլուխները միացած են եղել ժողովրդի  
ներկայացուցիչներին հետ:

—Այստեղ նոյնպէս ունեւք մի ամենալաւ  
եկեղեցական, որի վրա կարելի է յայտ դնել,  
ընդհանրեց իշխանը բեկի խօսքը:

—Ո՞վ է:

—Տաթևի վանքի Ներսէս արքեպիսկոպոսը: Ես  
ամեն ինչ յայտնել եմ նրան և նա մեծ անհա-  
բերութեամբ սպասում էր քո գալուտանը:

—Ներսէսներին հաւատալ կարելի է, մեր  
պատմութեան մէջ Ներսէսները ներկայացնում  
են միշտ պայծառ բացառութիւններ:

Արեգակը վաղուց մայր էր մտել, բայց վրան-  
ներից ոչ մէկի մէջ դեռ ճրագ չէր երևում: Լու-  
սընկալ գիշերը բաւական պարզ էր: Բեկի և

Իշխանի մէջ խօսակցութիւնը ընդհատվեցաւ,  
երբ հեռուից լսելի եղաւ սուլելու խորհրդաւոր  
ձայն: Բեկը աւելի ուշադրութեամբ ականջ դը-  
րեց, երբ ձայնը կրկնվեցաւ: Այդ միջոցին եր-  
կու ձիււորներ ամենայն թափով իրանց նոյնգ-  
ները վազեցնելով, մասն ձորի մէջ և մօտեցան  
բեկի վրանին: Նկուրները նրա մարդկին էին,  
մէկը մեծ Գիօրգին, միւսը փոքր Գիօրգին: Նը-  
րանք ուղարկված էին Կարա-չուշուների կե-  
ցած տեղի դիրքերը հետազոտելու: Բեկը իսկոյն  
խնայում տուեց իր ծառաներից մէկին, որ Միսի-  
թար սպարապետին և Բայիդուր իշխանին կան-  
չեն իր մօտ:

Երբ նրանք եկան, բեկը ծանօթացրեց Ստե-  
փաննոսին նրանց հետ, առկալով.

—Ահա այն մարդը, որ մեզ հրաւիրել էր այս-  
տեղ—Իշխան Ստեփաննոս Դահուսիան:

Բայիդուր իշխանը լեք աչքով նայելով նրա  
վրա, ասաց.

—Գուր կանչեցիք, ընք եկանք, եթէ այս  
րոպէին ինձ ճինգ հաղար հրացանաւոր չը տաք,  
պարսից թագաւորի չաթման զինը՝ քեզ ճինգ  
հաղար կտուր կանէ:

Բոլորը ծիծաղեցին: Այդ միջոցին մեծ Գիօր-  
գին և փոքր Գիօրգին նոյնպէս մասն բեկի վը-  
րանը: Սկսվեցաւ խորհուրդը գիշերային արշա-  
ւանքի մասին Կարա-չուշուների ցեղի վրա:

(Կը շարունակվի)

\*) Գովհաննէս իշխանը ռուսաց Աննա Իվա-  
նովնա կայսրուհու ժամանակ Գերբէնդից և Հաշ-  
տարխանից գնալով Ս. Պետրբուրգ, ստացաւ  
դեմաւրդ մայրութիւն: Նրա երբեմն գուգարա-  
ցոց և երբեմն ուտէացոց իշխան կոչվելու պատ-  
ճառն այն էր, որ տիրում էր այդ երկրների մի  
մասի վրա:



# Յ Ե Յ Տ Ե Ր Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մինչև այժմ չեղած **ԵԿԵՆՔԻ ԻՆՎԵՍՏԻՑԻԱ** ընդհանուր կատարելագործված է բոլոր **ՄԱՎՐԻՆԻ ԴԻՅՈՒՅՑ** Եւրոպայում և ամեն տեսակ թուղթերի, եթե նա քանական չէ: **ԵԿԵՆՔԻ ԲՈՒՐՆԻ** ըստանալուց յետոյ ուղարկվում է **ՄԻ ՀԻՇ** այդ իւրից, մանրամասն թԵՏԵՆԵՐՈՎ, գործածութեան մասին: Եւրոպայի կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր **ԴԵՎԱՏՈՒՆՆԵՐԻՑ** և Եւրոպայի **ՎԵՆՏԵԼՆԻՑ**, Կազանկայա փողոց № 3: 46—52

Վերականգնող **ՄԱՎ-ՄԱՍՏԵՐ**, մաշկը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող: Վերջ 2 ր. շիշը, **ՓՈՍՍՍՆՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ.: **ՆԵՐՎԻՍԱԿԱՆ** խառնուրդի մէջ:



Մի և նոյն տեղը **ԻՆՎԵՍՏԻՑԻԱ**, մաշկը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող: Վերջ 2 ր. շիշը, **ՓՈՍՍՍՆՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ.: **ՆԵՐՎԻՍԱԿԱՆ** խառնուրդի մէջ: 53—100

2ր. նոյնիով մաշկի աւելանալուն ապրանքները առաջիկայ գնեցողը կը ծախվին. **ԿՈՆԳՈՒԹԵՅ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ. **ՄՈՆԻՏԵՐ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիւսիսային **ԿԱՅՍԱՌԻ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱԻ** **ԹԵՅ** 2 ր. առանց թղթի: Մեղրիական բէլովիներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200 ր. Մեղրիական խառնուրդի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆՍԲԵՐԻ ԹԱՄԲԵՐԸ**, Ջեմսնի **ԿՈՂՊԵՔԵՐԸ**, Տուրիսի **ԳՐԻՉԵՐԸ** և Էլտարակա կակաո-շօխալի ծախելու համար, որոնք վարկի հանգիսի ժամանակ ոսկի մեզայ ստացան: **ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.: Վաճառականներն օգտուէն է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել: Մեղրիական խառնուրդի մէջ: Վերջից հազուստ 15 ր., կոնֆէկաներ հազի գէմ 60 կ. Ֆունտը: 61—100

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է **Կենտրոնական** և պ. Զ. Գրիգորեանցի **Կոմիտան** գրաւաճառանոցներում: Մասնաւոր, ֆիզիկական և բարոյական ինքնակրթութեան մասին: Հեղ. Զոսմաքոս Բէկկի: Թարգմ. Գրիգոր Եւսէպիանի: Վերջ և 60 կոպէս: Օտարաբարոյքացիք կարող են ուղղակի թարգմանչին գիմել այս հասցեով: **Յ. Թիֆլիս, Կուչելոյ Արմանսկոյ Դухովնոյ Տեմարի Ներսիսյան, Գրիգորի Սախ-Բուդաղանց**: Տպագրութեան համար բոլորովին պարտաւոր է թարգմանչի հետեւեալ աշխատութիւնը: **Մայրական Կատարակոթի** թիւեր, բնութեան օրինակ վերայ հիմնուած: Հեղ. Ժ. Բոմբոստանի:

**ՎԱՃԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԳԼԻՍԿԱՆ ԻՆՎԵՍՏԻՑԻԱ** կը ծախվին: վարկներ 4 ր., ամբողջ հա-զուստ 14 ր. և ունի, տրիս և պարտաւոր-նա 75 կ. արշինը: Նոր ձևի հրացաններ 45 ր. 60 ր. և 100 ր., բէլովիներ 4—40 ր., Էլտարակա 1 ր., Թամբեր 30 ր. և աւելի, կոնեակ առաջին տեսակի 2 ր. շիշը, հիւսիսային և խնդի 1 ր. 40 կ., շաււ պոյնզ գինի 3 ր., կոնֆէկաներ 35 կ. Ֆունտը, շօխալ-Ֆրայի 1 ր. 20 կ. անգլ. Ֆունտը և թէյ առանց թղթի 1 ր. 60 կ. Ֆունտը, ամենալաւը Մոսկովց 2 ր. 20 կ. թղթով: **ՄԻՆԵՐ ՈՅՆ ՏԵՂԸ ՄԵԾՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ** մահճակալներ, մատուցարաններ, կողպէքներ, քանակներ, գլխարկներ, գրիչներ, թուղթ, կէտիկա, ձիա-սանտր, վրձին, ամաններ, բաժակներ, մա-րաքաներ և այլն 30% աւելի էժան, քան թէ ուրիշ խառնուրդներում: 7—15

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է **Կենտրոնական** ու **Կոմիտան** գրա-վաճառանոցներում: **ՄՈՒԼԵՐԻ ՏՂԱՄԱՎԱՆՏ ԻՐԱՏ**, **ՀԵՂԻՆՈՎ** և **ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ**: Գինն է 30 կ.:

**ՄԻՆԶԵԻ 1831 ԹՈՒԱԿԱՆ ԲԱՐՈՒՐԻՆՎԱՆ ԿԵՐՁԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄԵՆՆԱՅՍ ՎԵՅ ԳՐԲԵՐԸ**: 1) Երկու մանրակապ **Ա.Ֆոնս Գորէից** թարգմ. Ն.Տ.Ք.Ա.Ետիքանի: Վերջ և 15 կ. 2) Պոզնանու ուսուցչի օրագրից, թարգմ. Տ. Նազարեան: 20 կ. 3) Պարապ ժամեր, ինքնուրոյն բանա-տեղծութիւններ: Ն.Տ.Ա.Ետիքանի: 25 կ. 4) Ճանապարհորդութիւն **Ղարաբաղում**, Արցախից: 30 կ. 5) Ծաղիկ և ծաղիկահատութիւն, թարգմ. Տ. Նազարեանի: 15 կ. 6) Քնար խոսակ, բանաստեղծութիւն-ներ: Ն.Տ.Ա.Ետիքանի: 50 կ. Այս վեց գրքի գինն է միասին 1-50 կոպէս: Առանձին մէկի համար բաժանոր-դագրութիւն չէ ընդունվում, բայց: **Քնար խոսակից** օրի համար առանձին կարելի է ստորագրել և քննարկող հինգը առանձին: Հրատարակիչ **Տիգրան Յ. Նազարեան**

Въ Редакціи газеты  
«МПАКЪ»  
Продается  
«ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ  
ТУРЕЦКИХЪ АРМАНЪ.»  
Д. Григорія АРЦУНИ.  
Брошюра напечатана въ Москвѣ.  
Цѣна 25 коп.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում են **Կենտրոնական Գրաւաճառանո-ցում**: 1. Հայր և Հայաստանը օտարների աչքում, հրապարակական գաղափարներ ըն-թերցող: Թիֆլիսի Ժողովարանում: Արքայ Յովհաննէսեանի, Թիֆլիս, 1881 թ. գ. 30 կոպ. 2. Նոյն տեղը վաճառվում են: Միութիւն Հայութեան, Բանաստեղծութիւն Մաղաքիայ Ծ. Վարդապետի Օր-մանեան, արտասանեալ ի խորանին կրթաւորաց ընկերութեան Զիւսիկաւար ի 17-ին նոյեմբերի 1879 թ., Կ. Պոլիս գ. 45 կ. 3. Տեղեկագրութիւնը ի փոքր և ի մեծ Հայս Հ. Ներսէսի Սարգսեան Միւ-թարեան վարդապետի, Վ. Ներսիսի գ. 4 ր. 4. Ստորագրութիւն հին Հայաստանացի Հ. Ղուկ. վարդ Ինձիճեան ի Միւ-թարեան Միւթ. ըստ հին և ըստ միջին դարու անուանեալ ժամանակաց ի Վ. Ներ-սիսի գ. 5 ր. 5. Պատմութիւն Արիստակէս վարդապետի Լաստիկերցի, Վ. Ներսիսի գ. 1 ր. 50 կ. 6. Մեծին Գրիգորի Առջնայն Սրբոյ Քահանայապետի կանոն Հովուական, Վ. Ներսիսի գ. 1 ր. 50 կ. 7. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ծառք և աղօթք, Վ. Ներսիսի գ. 2 ր. 8. Հաւաքութեան Պատմութեան Վարդապետի վարդապետի լուսարանեալ Վ. Ներսիսի գ. 2 ր. 9. Տեղեկագրութիւն Հայոց Գաղթականութեան Ուղղեմարութիւն յամի 1876 Արշակայ Մ. Արթուրեան Գրքան գ. 1 ր. 20 կ. 10. Սոր. Կեանքի Բերթում ի Մահի Արշի, թարգմանեալ Տիգրան Հ. Մանուկի Վ. Ջախախտան ի Միւթարեան միաբանութիւնէ, Վ. Ներսիսի գ. 1 ր. 75 կ. 11. Առակը Միւթարայ Գորչի, Վ. Ներսիսի գ. 1 ր.: Նոյն տեղը ստացուել են մեծ քանակութեամբ Զատիկի տօներին նուիրուող գանա-լան համարի մանկանց ընթերցանութեան համար փառակազմ գրքեր, Ֆրեբերեան խա-ղեր, նկարադրական ուսման պատկերներ և այլն: Օտարաբարոյքացիք ճանապարհի ծախք են վճարում 10%, առանց փողի պա-տուէրները չեն կատարվում:

| Ա Ն Գ Լ Ի Ս Կ Ա Ն Մ Ա Վ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ |            |                          |               |
|---------------------------------------|------------|--------------------------|---------------|
| Հաւանակեցէք թէյի ֆունտը               | 1 ր. 5 կ.  | Մոսկովցի բերդով թէյի հետ | Ֆ. 1 ր. 30 կ. |
| —                                     | 1 ր. 10 կ. | —                        | Ֆ. 1 ր. 40 կ. |
| —                                     | 1 ր. 20 կ. | —                        | Ֆ. 1 ր. 60 կ. |
| —                                     | 1 ր. 40 կ. | —                        | Ֆ. 1 ր. 80 կ. |
| —                                     | 1 ր. 60 կ. | —                        | Ֆ. 2 ր. —     |
| —                                     | 1 ր. 80 կ. | —                        | Ֆ. 2 ր. 50 կ. |
| Ամենալաւը                             | 2 ր. —     | —                        | Ֆ. 3 ր. —     |
| 68—100                                |            |                          |               |

**ՎԱՐՇԱՎԱՆ** իր յատկութիւններով մարմնի մասերի և մանուկանց ոտքի մասերի քրտինքից առաջ եկած փառումն ոչնչացնող յայտնի նիւթը, **ԳԱԼՄԱՆԻՆ** անունով ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների ղեղաւորների և գրողների մօտ: Գլխաւոր դէպօ նիւթի հնարող Փարմայի մազիստրոս **Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ** ղեղաւորում մէջն է գտնվում: Վարշավայում, Էլեկտրային փողոց № 35. Գալմանին մեծ արդիւնը արժէ **Վարշավայում** 50 կոպ., աւելի փոքրը 30 կ. պէտք է զգուշանալ խորհրդակցութիւնից և պահանջել, որ իւրաքանչիւր արդիւնը ունենայ գործածութեան մեկնութիւնը և ֆարկի աշխարհահայտնի մեզայները: **Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ** 2—20 (1)

**ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳ-ԼԻԱԿԱՆ ՄԱՎԱԶԻՆԸ** ծախվում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետեւ այդ մա-կագիններ ստանում է թէյ ուղղակի պլան-տատորներէ, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բուսականա-նում է փոքր շահով: Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տե-սակի, կակաո և շօխալ-Ֆրայ, մուրաբա և կոնֆէկաներ 25% աւելի էժան, քան թէ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, բէլ-վովիներ, կողպէքներ, մատուցարաններ, ա-մաններ, գանակներ, գլխարկներ, թէյաման-ներ, բաժակներ, թամբեր, գուլպանե-

կանանց և տղամարդկանց, թաշկինակներ-մակիւնտօններ, կարկնիք, թուղթ, մատիտ-ներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեւի համար և այլն, 20 մինչև 40% աւելի է-ժան քան թէ ուրիշ տեղ: Արժուէնու-ղայլէրէում: 100—83 **ՄԱՄՈՒԼԻ** տակից դուրս եկաւ և շուտով կը տարածվի **ԵՐԵՒԱՆԻ ՆԱ-ՀԱՆԳԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ**: Գրքոյը 96 երեսից բաղկացած և տպված **ԵՐԵՒԱՆՈՒՄ**: Կը ծախվի առաւելապէս **ԹԻՖԼԻՍԻ** մէջ **Կենտրոնական գրաւաճառանոցում**: 7—7.